

Անդերսընի «Հէֆիաթները» (կաղանդի նուէր հայ երեխաներին), հեղինակի պատկերով և կենսադրութեամբ, Թարգմանեց Փրանսերէնից Տ. Զաւէն. Թիֆլիս, 1904, դինն է 50 կողմ:

Պ. Հ. Առաքելեանի հրատարակութեամբ վերջերս սկսել են լոյս տեսնել մի շարք գրքոյկներ՝ «Հանրամատչելի գրադարան» ընդհանուր վերնագրով:

Դանիացի նշանաւոր գրող Անդէրսընի «Հէֆիաթները» կազմում են այդ գրադարանի առաջին №-ը: Փոքրիկ, սիրուն պատմուածքներ—թւով ինն հատ,—նրանք կարող են շատ հետաքրքրական լինել մեր մանուկների համար, որոնք, դժբախտաբար, վերջին տարիների ընթացքում շատ քիչ բան են ստանում ընթերցանութեան համար: Թարգմանութեան լեզուն պարզ է, կանոնաւոր և մանուկների համար մատչելի: Գրքոյկի մէջ կան նաև պատկերներ: Ցանկալի էր, որ այս վերջինները աւելի աշողուած լինէին:

Ա. Մ.

«Քերեկա», գրոյց Բ. Խոսեմսիու. Թարգմ. Ա. Դո-ի, Պետերբուրգ, 1903 թ., դինն է 3 կողմ:

Հրէական կեանքէ վերցուած դեղեցիկ պատմուածք մըն է Քերեկան: Պատմուածքին նիւթը՝ այդ բազմաշարճար, պարիա ժողովուրդի երկար մարտիրոսագրութեան մէկ դրուագն է, որոնց նման անցքերով լեցուն է, դժբախտաբար, թրքահայ մոայլ իրականութիւնը՝ նոյնիսկ մեր օրերուն մէջ: Ընտրութիւնը լաւ է:

«Շահադէ և Փէրիխանում», գրեց Ա. Փ., 1903 թ., Թիֆլիս.. դինն է 30 կ.:

Շահադէ և Փէրիխանումի նման հէքիաթներ ամեն երեխայ լսած է իր տատերէն ու պառաւ դայեակներէն, և որոնք՝ անխուսափելի կերպով կը վերջանան ճարանք հասան իրենց մուրադին, դուք էլ հասնէք ձեր մուրադին» պայմանդրական խօսքերով.— գոնէ այդ անմիտ ու ուամիկ հէքիաթը գրուած ըլլար քիչ ու շատ գրական ոճով... Բացէք որեւէ էջը և կը հանդիպէք այսպէս անվերջ նախադասութիւնների. «Երբ Շահադէն Փէրիխանումից այս տեսակ սիրտ կտրատող խօսքերը լսեց և ինքն էլ անձամբ ակնատես եղաւ նրա տխրութեանն ու լացին, այս անգամ իւր